կարա ասում էին.—«Դուք, հայեր, մեր չորս մզկիթները այրել էք, վիրաւորելով մեր կրօնական զգացմունքները. մենք այդ տեսակ մի անպատւութիւն մինչև յաւիտեան չենք մոռանայ, պէտք է մզկիթների վրէժը լուծենք ինչ գնով էլ լինի. հիմա կամ դուք կը կոտորէք կը վերջացնէք մեզ, կամ մենք ձեզ կը կոտորենք կը վերջացնենք։ Հաշտութիւն... Աստաֆուլլահ. այլևս երբէք չի կայանայ»...

Բացի այդ, մի ամիս էլ սրանից առաջ մեզ յայտնի չարագործ Աբաս-Ջալ-օղլին, որն ամեն օր հաշտարար միջնորդի դուռն է ծեծում իր նախկին տանուտէրութեան պաշտօնն ըստանձնելու համար, մորակը ձեռքին, ձիու վրա նստած, շրջում է գիւղի Թուրքերի կալերը և սպառնալիքներով ծեծում, ստիպում Թուրքերին, որպէսզի շտապեն և շուտ ծեծեն, վերջացնեն որենները։

Այդքանը դեռ ոչինչ։ Այս ամառվայ սկզբից մինչև այսօր Թուրքերն իրանց տնային շարժական բոլոր կարողութիւնը՝ սկսած հացահատիկներից, Թանկագին մթերքներից մինչև ամենաչնչին իրը՝ ամեն առաւօտ արշալոյսին տանեակ սայլերով ու ֆուրգոններով, ինչպէս Նախկանանց և երեխաներին խոտոր ճանապարհներով տեղափոխում են Արաքսի մօտերքին գտնվող Թուրքական գիւղերը։ Իսկ այժմ գիւղում մնացել են զինված տղամարդիկ հառ-հառ աչքի ընկնող կանանցով։

Ուրեմն ամեն ինչ սարք ու պատրաստ է, մնում է միայն մի տեսակ օյինբազութիւնով զօրքը գիւղից հեռացնել, կեղծ «սադայէլեան» հաշտութեան դիմակի տակ հայերին մրամոտացնել և յետոյ էլ անել ըստ իրանց քմահաճոյքների։ Բայց անցեալ դառն փորձութիւնից հայերն արդէն խրատվել են։ Նրանք պատասխանել են Թուրքերին այսպէս.—«Մենք հայերս միշտ հաշտ ենք եղել, հաշտ ենք և հաշտ էլ լինելու ենք մինչև վերջ. եթէ դուք զէնք բարձրացնէք մեզ վրա, մենք էլ նոյնը կանենք, իսկ եթէ համերաշխ ապրէք, մենք էլ նոյնը կանենք։ Նոր հաշտութեան մասին առանձին պայմաններ մշակել աւելորդ է, և մենք չենք ցանկանում, որ զօրքը գիւղից հեռանայ մինչև գիւղի բաժանման հարցի լուծվելը»։ Միայն չեն խրատվում մեր Ջահկեցի «քաջերը», որոնք օր ու գիշեր Թափառում են պանդխտութեան չոր անապատներում և որոնք իրանց աղէտեալ հայրենակիցների աղած աղեկտուր կոչերին պատասխանում են խուլ ժայռի նման դաւաճանութեան հասած քար անտարբերութեամբ... «Ձեր հայրենիքի իւրաքանչիւր քար ու Թուփ ձեր հասցէին «Նըզովք» է մրմնջում. ծուր էք»...

Գեղունի

## ՀԱՄԱԿՐԵԼԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ Բագուից)

—

Օգոստոսի 11-ին

Բագուից մօտ երկու վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Հայկական-գաղութ կոչվող արուարձանը, բաղկացած մեծամասնութեամբ հայ բնակիչներից և գլխաւորապէս արհեստաւոր դասակարգին պատկանող մարդկանցից։

Քաղաքից բաւականին հեռաւորութեան վրա գտնվելով և հնարաւորութիւն չունենալով յաճախել Թատրոն, գրադարան ընթերցարան և նման տեղեր, որով կարելի լինի գէթ մի փոքր բարձրացնել իրանց մտաւոր զարգացման մակերևոյթը, ազգաբնակութիւնը մնում է խորին մթութեան մէջ խորասուզված։ Դրանից ի հարկէ օգտվում են պղտոր ջրում ձուկ որսացող, quasi «յեղափոխական» մարդիկ և ամեն կերպ աշխատում են շահագործել ազգաբնակութեան տգիտութիւնը իրանց և իրանց գրպանի օգտին։

Կամենալով ազգաբնակութեան առաջադիմութեանը մի փոքր զարկ տալ և նրան գոնէ մասամբ դուրս բերել իրան գերող կաշկանդող մթութեան ճիրաններից, տեղիս երիտասարդների և գիտակից աշակերտների մի խումբ հիմնում է երկու գեղեցիկ և միև գամայն համակրելի ձեռնարկութիւններ՝ ժողովրդական Թատրոն և գրադարան-ընթերցարան։

Ներկայումս այդ երկու հիմնարկութիւնները գտնվում են մի շինութեան մէջ, որտեղ երիտասարդների ջանքերով պատրաստված է մի փոքրիկ, բայց գեղեցիկ դահլիճ, իր սիրուն և կոկիկ բեմովը, ուր համարեա թէ իւրաքանչիւր շաբաթ պարբերաբար հանրամատչելի ժողովրդական ներկայացումներ են տրվում սիրողների խմբի կողմից դերասան Մ. Աւալեանի ղեկավարութեամբ։ Խումբը ոչ մի միջոց չէ խնայում իր գործը դնել զուտ ժողովրդական հիմունքների վրա և իր արածովը ժողովրդին օգտակար լինել։ Այդ նպատակով էլ արդէն, ինչպէս լսում ենք, կազմված է միութեան ծրագիրը, և ներկայացված Բագուի գեներալ-նահանգապետի հաստատութեանը։ Տեղերի գները այնքան էժան են նշանակված, որ հնարաւորութիւն է տրվում ամեն մարդու յաճախել Թատրոն։ Բոլոր սիրողները չափազանց բարեխղճութեամբ են վերաբերվում գործին, և հասարակութիւնը ամեն անգամ հեռանում է շատ լաւ տրամադրութեան տակ ու գոհ՝ ներկայացումները կազմակերպողներից։ Իսկ ամենաուրախալին այն է, որ բուֆետում, ինչպէս ուրիշ տեղեր, ոգելից խմիչքներ չեն ծախվում։ Մոռացայ ասել, որ մասնակցողներից և ոչ մէկը որևէ վարձատրութիւն չէ ստանում։

Նոյն հիմքերի վրա են դրված, ինչպէս վերև ասացի, Թատրոնին կից գտնվող գրադարան-ընթերցարանը, որտեղ ստացվում են բոլոր հայ Թերթերը և տեղիս ռուս Թերթերը։

Թւում է թէ ամեն մի փոքր ի շատէ գիտակից մարդ, առաւել ևս իրանց «սօցիալիստ-յեղափոխականներ» անուանողները, ամեն մի հնար, ամեն մի միջոց պէտք է գործ դնէին այդ հիմնարկութիւնների առաջադիմութեանը զարկ տալու համար. բայց աւ՛ ու աւս, որ այդպէս չէ. ժողովրդի շահերի, նրա առաջադիմութեան անունից խօսող յեղափոխական մարդիկ ոչ միայն չեն նպաստում այդ հիմնարկութիւններին, այլև ամեն կերպ աշխատում են խոչընդոտ հանդիսանալ նրանց։

Պատճառը։

Պատճառը շատ պարզ է։

Խաւարասէր խլուրդները միշտ մթութիւն են փնտռում։

Այդ պարոնների համար, որոնք ներկայումս իրանց ամենակարող ձեռքն են առել գաղութի

